ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՕՎՍԱՆՆԱ ԼԵՎՈՆԻ

ՄԱՐԴՈՒ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ
փիլիսոփայական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդ.Ա. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ե. Մկրտիչյան

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ.Ա.Սողոմոնյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ. մայիսի 13-ին, ժամը 14.00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ., 52ա, ԵՊՀ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025թ. ապրիլի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Է.Ղարագուլյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունն ու հրատապությունը: Հակասությունների և աննախադեպ խմորումների հետարդիականության մեր դարաշրջանում գնալով դժվարանում է ապրած ժամանակաշրջանի համաժամանակյա գնահատումն ու մարդկային կեցության գոյաբանական կայունության ապահովումը:

Բանն այն է, որ արդի տեխնածին քաղաքակրթությունը մի կողմից էապես ընդլայնել է մարդու գոյության ու գործունեության սոցիալ-մշակութային տարածության ու ժամանակի շրջանակները՝ ներառելով նրան հնարավորությունների նոր համատեքստի մեջ, մյուս կողմից, սակայն, այդ նույն գործընթացների վերջնարդյունքում հիմնովին փոխվում ու փոխակերպվում են մարդու և նրա կողմից ստեղծած գոյաբանորեն ակնհայտ ու իրական երբեմնի աշխարհի էկզիստենցիալ հիմունքները, ինչպես նաև հանրային կյանքը կազմակերպող սոցիալական կեցության երբեմնի կառուցվածքը՝ փոխելով նաև մարդու կենսագործունեության գոյաբանական կարգի առարկայական հիմունքները, մարդու էությունն ու բնույթը, մարմինն ու հոգևոր ներաշխարհն ընդհանրապես: Արմատական այս փոխակերպումները, բնականաբար, պահանջում են նորովի մեկնաբանել ու հասկանալ, թե ինչ է նշանակում մարդ լինել և ինչպես պահպանել նրա գոյաբանական ամբողջականությունը մի աշխարհում, որտեղ սահմանադիր իրավասություններով օժտված տեխնածին կեցությունը հիմնովին փոխում ու խմբագրում է մարդու գոյության ու մարդկային համակեցության կազմակերպման ու կանոնակարգման սոցիալ-մշակութային համատեքստը՝ հարկադրելով նրան «լքել» իրեն հարազատ ու մտերմիկ ավանդական կենսաշխարհն ու «բնակություն» հաստատել մի աշխարհում, որտեղ մարդու ամենօրյա կյանքն ու կենսագործունեությունը առլեցուն է տեխնածին (արհեստական ինտելեկտ, արհեստական ճանապարհով ստեղծված համաճարակի բացիլներ, կիբեռխարդախություն և այլն), սոցիալ-մշակութային (արհեստական սոցիալականություն, կեցության թվայնացում, վիրտուալ աշխարհ, ինքնության ճգնաժամ, լուսանցքային մարդ, սոցիալական դերի ու դիմակի սերտաճում և այլն), մարդաբանական (կենսատեխնոլոգիական միջամտություն, սեռի փոփոխություն, մարմնի ապակենսաբանականացում և այլն), գոյութենական (լքվածություն, տագնապ, կյանքի իմաստ, կիբեռնետիկական անմահություն և այլն), այլ կերպ ասած՝ գոյաբանական մարտահրավերներով:

Մասնավորապես, տեխնոլոգիական աննախադեպ առաջընթացի, ինչպես նաև մարդու սահմանազանցական գործունեության հնարավորությունների բազմապատկման արդյունքում ժամանակակից քաղաքակրթությունը ոչ միայն գոյաբանական նոր հեռանկարներ է բացել մարդու առջև, այլև ձևավորել է տեխնոլոգիաներով համալրված սոցիալ-մշակութային հնարավոր մի կեցություն, երբ սոցիալական իրականությունը ընկալվում է ոչ միայն որպես առարկայական-

օբյեկտիվ տրվածություն, այլև որպես կառուցարկման արդյունքում ձևավորված «արհեստական սոցիալականություն» կամ վիրտուալ կեցության մի նոր աշխարհ, որը զուրկ է նյութական հիմունքներից, մարմնական ներկայությունից և հիշողությունից, այն ամենից, որոնք կարելի է անվանել կենսափորձի կուտակման ու փոխանցման բնական մեխանիզմներ:

Մի ինքնատիպ իրավիճակ, երբ դիմազրկվում և խարխլվում են կառուցվածքային որոշակիություն ունեցող բազմաթիվ սոցիալական, հոգևոր և մշակութային իրողություններ, և մարդը ստիպված է վերադասավորվել սոցիալական նոր միջավայրում, յուրացնել վերջինիս ընձեռած հնարավորությունները, փորձարկել սոցիալական զանազան դերեր, ընկալել իրենից անկախ իր հետ տեղի ունեցող այլակերպումներն ու փոխակերպումները, նորովի չափագրել իր սոցիալական տեղը և նախագծել սեփական կյանքը: Նաև մի իրավիճակ, երբ իրական հարաբերությունները փոխարինվում են տեխնիկական համարժեքներով, տարրալուծվում ու անհետանում են մարդու և մեքենայի միջև սահմանները, ինչի արդյունքում սոցիալական կյանքի կազմակերպման ավանդական ձևերը աստիճանաբար կորցնում են իրենց երբեմնի կենսունակությունը և ձևավորվում են սոցիալական կյանքի կազմակերպման ու կանոնակարգման նոր մեխանիզմներ, որոնք այլևս նախորդ պատմական փորձի հետ քիչ առնչություններ ունեն և բխում են փոփոխված պատմական և մշակութային միջավայրի պահանջներից ու ներքին տրամաբանությունից: Արդյունքում՝ խճանկարային, ազատական ու անհատապաշտական մշակույթի գերակայությունը, համակեցության ավանդական ձևերի ու կապերի թուլացումը, ինչպես նաև թվային միջավայրում հարաբերությունների ապաառարկայացումը ձևավորում են ըմբռնման մի նոր համատեքստ, որում «սոցիալական մահը» այլևս աղետ է նրանց համար, ովքեր իրենց բեկորացված, անորոշ ու անկայուն ամենօրյա կյանքում վերածվել են օտարված, լուսանցքային, անդեմ ու ավելորդ դերակատարների:

Այս երևույթները ոչ միայն մշակութային, էկզիստենցիալ ու հոգեբանական ճգնաժամի ախտանշաններ են, այլև վկայում են, որ սոցիալական կյանքի համակարգաստեղծ հիմունքների աննախադեպ փոխակերպումների արդյունքում արդի քաղաքակրթությունը հայտնվել է գոյաբանական նոր մարտահրավերների հորձանուտում և իր էկզիստենցիալ անկախության համար ծավալած սահմանազանցական գործունեության արդյունքում մարդկությունը կարող է նաև զրոյացնել սեփական գոյության հնարավորությունները, ինչը նշանակում է, որ իր իսկ կերտած աշխարհում մարդու ինքնահաստատման պատմությունը մշակութային երանգավորում և սոցիալական եղանակավորում ունեցող անավարտ դրամա է և ունի սոցիալ-փիլիսոփայական իմաստավորման անհրաժեշտություն:

Հիմնախնդրի գիտատեսական մշակվածության աստիճանը: Թեև մասնագիտական հետազոտություններում արդի գոյաբանական մարտահրավերների, մարդկային կեցության այլակերպումների, «արհեստական

սոցիալականի» (վիրտուալ կեցություն), արհեստական ինտելեկտի, մարդու կենսաբանական մարմնի տեխնիկական կատարելագործման, ինչպես նաև մարդու սոցիալական ինքնության և էկզիստենցիալ ճակատագրի հիմնահարցերը անտեսված չեն, բայց դրանք դեռևս համակողմանի և համակարգային վերլուծության կարիք ունեն, ինչը թույլ կտա մեկ ընդհանրական հայեցակարգի շրջանակներում ուսումնասիրել սոցիալական գոյաբանության սահմանադիր ու սահմանազանցական գործառույթների, ինչպես նաև մարդու էկզիստենցիալ ճակատագրի և հասարակության կառուցվածքում նոր սոցիալական ենթաշերտերի («հետկենսաբանական մարդ», «վիրտուալ մարդ», «դիմակով մարդ», «ավելորդ մարդ») ձևավորման պատճառների ու հետևանքների հիմնահարցերը:

Խնդիրն այն է, որ, ի տարբերություն փոխադարձության և ճանաչման, համագործակցության և միջանձնային կենդանի փոխազդեցության հիմունքներով կառուցարկված ավանդական հասարակությունների, հետարդիական իրողություններում ձևավորվում են նաև վիրտուալ և ցանցային իրականության նորանոր ձևեր ու եղանակներ, որոնց պարագայում մարդկանց միջև կապերն ընթանում են ոչ թե առարկայական աշխարհում, այլ ցանցերի ու տեղեկատվական հոսքերի վիրտուալ միջավայրում, որտեղ, մասնավորապես, ցուցադրականությունն ու ալգորիթմային տեսանելիությունը հաճախ փոխարինում են իրական մտերմությանը և միջանձնային կապին: Այս առումով կարևոր է հասկանալ, թե գոյաբանական կարգի հիմունքների փոխակերպումների համատեքստում ինչ պատճառներ ու շարժառիթներ են ընկած մարդու սոցիալ-մշակութային կերպարանափոխման հիմքում, և ինչ մշակութային և վարքային համակարգեր են սնուցում այդ գործընթացը:

Ելնելով ասվածից՝ հիմնախնդրին առնչվող եղած հետազոտությունները կարելի է պայմանականորեն խմբավորել մի քանի առանցքային տիրույթներում.

- Հետազոտողների մի խումբ մարդու սոցիալ-մշակութային կեցության հիմնախնդիրը քննարկում է արդի տեխնոլոգիական առաջընթացի և մարդու գոյաբանական ներկայության էկզիստենցիալ հիմունքների փոխակերպման համատեքստում (Է.Լևինաս, Է. Սիորան, Մ. Բլանշո, Մ. Էպշտեյն, Պ. Բերգեր, Թ. Լուկման, Ն. Հարթման, Յ. Ն. Հարարի և այլք):
- Հեղինակների մեկ այլ խումբ հիմնախնդիրը քննարկում է մարդկային ինքնության փոխակերպումների վրա տեղեկատվական հոսքերի և ազդեցությունների, համաշխարհայնացման համատեքստում, որտեղ հետազոտության թիրախը ազատության սահմանափակման, գոյության իմաստի որոնման և անհատի ներքին անհանգստությունների հետ կապված այն խնդիրներն են, որոնք դիտարկվում են որպես ժամանակակից մարդու սոցիալական կեցության հիմունքներ: (Է.Դյուրկհայմ, Ռ. Փարկ, Ժ.Բաթայ, Է. Սթոնքվիստ, Հ. Արենդտ, Ջ.Ուրրի, Ա.Մասլոու, Մ. Ֆուկոյ, Զ. Բաուման, Ժ. Բոդրիյար, Մ. Կաստելս, Դ.Դուբրովսկի, Պ. Գուրևիչ և այլք):

- Մեկ այլ խումբ գիտնականներ հիմնախնդիրը դիտարկում են հետարդիականության զարգացումների, տեխնոլոգիական և թվային միջավայրի ձևավորման, սոցիալական կապերի, փոխհարաբերությունների, հանրային կյանքի ավանդական կառուցվածքների արմատական փոխակերպումների և վիրտուալ ու կեղծանմանակումների աշխարհի ձևավորման համատեքստում, որտեղ մարդը վերածվում է դիմակավոր, անդեմ ու գեղագիտացմանը հակված անորոշ մի կազմավորման (Է.Ֆրոմ, Մ. Բլանշո, Զ. Բաուման, Մ. Ֆուկո, Ժ. Բոդրիյար, Գ. Դեբոր, Ջ.Ագամբեն, Չ. Քուլի, Մ.Կաստելս, Հ. Մարկուզե, Բ. Չ. Հան, Յ. Ն. Հարարի, Բ. Հյուբներ, Վ. Կուտիրյով և այլք);
- Արդի գոյաբանական մարտահրավերների, մարդկային ավանդական կեցության վիրտուալացման, ապակենսաբանականացման, ինչպես նաև մարդու սոցիալ-մշակութային դիմանկարի այլակերպումների, սպառողական հոգեբանության հիմնախնդիրները քննարկվում են նաև հայալեզու մասնագիտական գրականության մեջ (էդ. Հարությունյան, Վ. Միրզոյան, Գ. Սողոմոնյան, Կ. Յարալյան, Մ.Դեմիրճյան, Ղ. Ավետիսյան և այլք):

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտության նպատակն է վերլուծել արդի գոյաբանական մարտահրավերների համատեքստում մարդու սոցիալ-մշակութային կեցության փոխակերպումների պատճառներն ու հետևանքները, ինչը հնարավորություն կտա հիմնախնդրի ուսումնասիրության շրջանակում առանձնացնել և վերլուծել տեսական ու գործնական նշանակություն ունեցող երկու կարևոր ենթահարցեր.

- Մարդու սոցիալական կեցությունը «երկակի իրականությունների» աշխարհում:
- Մարդու սոցիալ-մշակութային դիմանկարի այլակերպումները:

Վերոհիշյալ ենթահարցերի ուսումնասիրության և դրանց առանձնահատկությունների վերլուծության նպատակով առաջադրվել են հետևյալ հետազոտական խնդիրները.

- վերլուծել սահմանի գոյաբանական կարգավիճակը և հիմնավորել սահմանազանցական գործունեությունը՝ որպես «այստեղ ու հիմա» նախասահմանվածի դեմ կառուցողական ընդվզում,
- ուսումնասիրել ապակառուցողական սահմանազանցման սոցիալ-մշակութային շարժառիթները,
- վիրտուալ գոյաբանության համատեքստում վերլուծել կեղծանմանակումների աշխարհի մարդու սոցիալ-մշակութային դիմանկարը,
- ուսումնասիրել մարդու ապակենսաբանականացման էկզիստենցիալ հեռանկարում «հետկենսաբանական մարդու» ձևավորման հիմնահարցը,
- սոցիալականը դիտարկել որպես բեմականացված կեցություն և վերլուծել «դիմակով մարդու» սոցիալ-մշակութային կերպարը,

- քննարկել սոցիալական կեցության գեղագիտացման համատեքստում մարդու «լինելու կամ երևալու» երկընտրանքը,
- անդեմությունը դիտարկել որպես հետարդիականության սոցիալ-մշակութային բնութագիր և ուսումնասիրել «զորանոցի մարդու» ձևավորման պատճառներն ու հետևանքները,
- սոցիալ-մշակութային կեցության լուսանցքում վերլուծել «ավելորդ մարդու» կերպարը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության համար մեթոդաբանական հիմքեր են ծառայել համեմատության, պատմականության, համանմանության, վերլուծության և համադրության մեթոդները, որոնց միջոցով բացահայտվել են տարբեր համակարգերի միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները: Մասնավորապես՝ համեմատության մեթոդը օգտագործվել է իրական և վիրտուալ ինքնությունների սահմանազատման, նրանց գոյաբանական և ճանաչողական տարբերությունները բացահայտելու և բնութագրելու առնչությամբ: Պատմականության մեթոդը հնարավորություն է տվել ուսումնասիրել ժամանակակից մարդու փոխակերպումների զարգացման ընթացքն ու օրինաչափությունները: Համանմանության մեթոդը կիրառվել է տարբեր սոցիալական երևույթների և սոցիալ-մշակութային կերպարների միջև կառուցվածքային ընդհանրությունները բացահայտելու, ինչպես նաև հայեցակարգային որոշ տեսական եզրույթների պարզեցման և դյուրըմբռնելի դարձնելու համար՝ ապահովելով տարբեր գիտակարգերի տեսանկյուններից թեմայի հասանելի ըմբռնումը: Վերլուծության մեթոդն ատենախոսության առանցքային գործիքն է, որի միջոցով հետազոտվել են գոյաբանական, մշակութային և սոցիալական կառուցվածքները՝ բացահայտելով մարդու կեցության նոր ձևերը և դրանց ենթադրյալ ճգնաժամային տիպաբանությունները: Համադրության մեթոդը կիրառվել է տարբեր հայացքների, տեսական մոդելների ու պատկերացումների ներդաշնակեցման նպատակով՝ ձևավորելու մի ամբողջական հայեցակարգ, որն արտացոլում է ուսումնասիրվող հիմնախնդրի բազմաշերտ ու համակողմանի բնույթը:

Հետազոտության գիտական նորույթը: Արդի տեխնոլոգիական ու սոցիալ-մշակութային գործընթացների համատեքստում վերլուծելով սոցիալական կենսաձևերի, հանրային կյանքի կազմակերպման ավանդական հիմունքների, ինչպես նաև մարդու գոյաբանական կարգավիճակի արմատական փոխակերպումների բնույթն ու բովանդակությունը, արվել են գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական արժեք ներկայացնող մի շարք եզրակացություններ և ընդհանրացումներ: Մասնավորապես.

- Սահմանազանցումը դիտարկելով որպես մարդուն բնորոշ էութենական բնութագիր և վերլուծելով գոյաբանական, սոցիալական և մշակութային սահմանազանցումների տարբերակիչ առանձնահատկությունները, հիմնավորվում է

այն թեզը, որ սահմանազանցումը սոցիալական սուբյեկտին բնորոշ՝ գոյաբանական կարգը սեփական շահերին ու նպատակներին ենթարկելու, ինչպես նաև ինքնահաղթահարման կարողունակություն է, որը, սակայն, սուբյեկտիվ շարժառիթների պատճառով կարող է նաև դրսևորվել որպես բարոյական հենարաններից զրկված մարդու ինքնանպատակ ընդվզում:

- Առաջադրվել և հիմնավորվել է այն թեզը, որ սոցիալական կյանքի թվայնացման, վիրտուալ աշխարհի ձևավորման, ինչպես նաև տեղեկատվական հոսքերի ու վիրտուալ աշխարհին բնորոշ կենսաձևերի տարածմանը համընթաց ձևավորվում է գոյության այլընտրանքային մի ոլորտ (վիրտուալ աշխարհ), որտեղ կեցության տեխնոլոգիական ձևերը գերազանցում են իրականությանը, ինչի արդյունքում մարդն աստիճանաբար տարրալուծվում է վիրտուալ համայնապատկերի մեջ և վերածվում «թվային քոչվորի»:
- Մարդու էկզիստենցիալ ճակատագիրը քննարկելով արդի գիտական ու տեխնոլոգիական նվաճումների համատեքստում՝ հիմնավորվում է այն թեզը, որ մարդու կենսաբանական մարմնի վրա տեխնիկական միջամտությունների արդյունքում ձևավորվում է կենսաբանական ու տեխնիկական օրգանների խառնուրդից կազմված տեխնո-կենսաբանական մի կազմավորում (կիբորգ), ով ոչ միայն չի արտահայտում բնական մարդու էությունը, այլև կարող է ընդդիմանալ բնության դրվածքին և ձեռք բերել «կիբեռնետիկական անմահություն»՝ հիմնովին փոխելով մարդու գոյութենական ապրումների (մահ, անմահություն, հույս, տառապանք և այլն) իմաստն ու բովանդակությունը:
- Սոցիալականը դիտարկելով որպես բեմականացված կենսաձև և այն քննարկելով արդի սպառողական-զանգվածային հասարակություններում կյանքի թատերայնացման միտումների համատեքստում՝ հիմնավորվում է այն թեզը, որ արդի սոցիալ-մշակութային իրողություններում երբեմնի սոցիալական հստակ կարգավիճակ, դեր ու դերակատարում ունեցող մարդը, իր իսկությունը դերասանական «ես»-ով մարմնավորվող դիմակի մեջ քողարկելու շնորհիվ, վերածվել է չբացահայտված մի գործակալի, ով տարբեր հանգամանքներում կարող է ապրել տարբեր սոցիալական ճակատագիր ունեցող մարդու կյանքով:
- Կեցության գեղագիտացումը դիտարկելով որպես սոցիալական գոյի ներքին հակասություններն ու կյանքի դժվարությունները մեղմելու, աշխարհն ապրելու համար բարեձև ու հարմարավետ դարձնելու եղանակ՝ միաժամանակ առաջադրվում և հիմնավորվում է այն թեզը, որ զանգվածային մշակույթը աստիճանաբար ձևավորում է իր բնույթին համարժեք դիմանկար ունեցող «գեղապաշտ մարդու» սոցիալ-մշակութային մի տարատեսակ, ով կյանքը ընկալում է որպես իմաստային լիցքեր չունեցող տեսարժան պատկերների ցուցադրման (ցուցադրական ապրելակերպ) և ցուցադրված լինելու բեմահարթակ:
- Հիմնավորվում է այն դրույթը, որ արդյունաբերական ու հետարդյունաբերական քաղաքակրթությունը, թեև մարդուն ազատագրեց

սոցիալական կարգի ավանդական կապաններից, բայց ձևավորեց խճանկարային մշակույթին ենթակա գոյաբանական կարգ, որում ոչ միայն առարկայական, այլև ցանցերից և հոսքերից հյուսված վիրտուալ աշխարհը նպաստում է անդեմ մարդկանց մի բազմության (ամբոխ և ամբոխի մարդ), ովքեր ասես ապրում են համօրինակ (ստանդարտ) վարքագիծ թելադրող զորանոցում:

Պաշտպանության ներկայացված դրույթները: Արդի գոյաբանական մարտահրավերների համատեքստում վերլուծելով մարդու սոցիալական կեցության, ինչպես նաև թեմային առնչվող մի շարք հարակից սոցիալ-մշակութային երևույթների փոխակերպման առանձնահատկությունները, համադրելով նաև հիշյալ հիմնախնդիրներին վերաբերող մասնագիտական գրականության մեջ շրջանառվող տեսակետներն ու հայեցակարգերը՝ պաշտպանության են ներկայացվել հետևյալ դրույթները.

- Սոցիալական կեցության փոխակերպումներն ու վիրտուալ իրականության ձևավորման արդի գործընթացները դիտարկելով որպես մարդակենտրոն աշխարհի մայրամուտ, առաջադրվում է այն դրույթը, որ ժամանակակից քաղաքակրթության համատեքստում սոցիալականի դասական ձևերը (արտադրություն, կառավարում, կենցաղ, շփում) աստիճանաբար նոր դրսևորումներ են ստանում, քանի որ վերաճում են ներկայություն չպահանջող, միջնորդավորված ու անդեմ փոխհարաբերությունների համակարգերի:
- Մարդուն դիտարկելով գոյաբանական, սոցիալական ու մշակութային առումներով սահմանազանցական էակ, առաջադրվում է այն դրույթը, որ սահմանազանցումը մարդու էության և ինքնության վերաիմաստավորման փորձառություն է, ինչը նրան հնարավորություն է տալիս վերափոխել աշխարհն ու վերաիմաստավորել իր տեղն ու դերն այդ աշխարհում:
- Առաջադրվում է այն դրույթը, որ գիտական ու տեխնոլոգիական առաջընթացը մարդու կենսաբանական հիմունքներին հավելելով կիբեռնետիկական արհեստածին այլևայլ օրգաններ ու սարքավորումներ՝ հիմնովին փոխում է մարդու էկզիստենցիալ ճակատագիրը՝ նրան տալով «կիբեռնետիկական անմահության» հասած «հետկենսաբանական մարդու» գոյատևման հնարավորություն:
- Սոցիալականը դիտարկելով որպես կեցության բեմականացման սոցիալ-մշակութային նախագիծ, առաջադրվում է այն դրույթը, որ սոցիալական դերն ու դիմակը բնութագրում են սոցիալական «նյութափոխանակման» համակարգում մարդու ներառվածության աստիճանը, շարժառիթներն ու ինքնադրսևորման հնարավորությունները:
- Կեցության գեղագիտացման խնդիրը դիտարկելով որպես սոցիալական կյանքին հուզական լիարժեքություն հաղորդելու մարդուն բնորոշ կենսադիրքորոշում՝ առաջադրվում է այն դրույթը, որ սպառողական մշակույթի համատեքստում կեցության գեղագիտացման միտումները աստիճանաբար ներթափանցում են մարդու գոյաբանական խորքերը՝ ձևավորելով ներքնորեն

անդեմ, բայց արտաքնապես տեսարժան, պճրանքներին տրվող, այլ կերպ ասած՝ ցուցադրական ապրելակերպին ու կենցաղին ենթակա «գեղապաշտ մարդու» կերպարը:

- Անդեմությունը, միաչափությունը, անհատականությունների համահարթումը դիտարկելով որպես սպառողական հասարակությանը և զանգվածային մշակույթին բնորոշ սոցիալ-մշակութային հիվանդություն, առաջադրվում է այն դրույթը, որ վարքագիծ ձևավորող այլևայլ «գործակալների» հսկողության տակ հայտնված մարդը աստիճանաբար համակերպվում ու հարմարվում է իրեն պարտադրված զորանոցային կյանք հիշեցնող կենսակերպին՝ վերածվելով սոցիալ-մշակութային շուկայի կրավորական հաճախորդի:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսությունում վերհանված հիմնահարցերը, ձևակերպված տեսական ընդհանրացումներն ու արված եզրահանգումները ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն և կարող են նպաստել մի շարք գիտական և կիրառական գործընթացների սոցիալ-փիլիսոփայական իմաստավորմանը՝

- արդի սոցիալ-մշակութային, բարոյագիտական և գոյաբանական հիմնահարցերի վերլուծության տեսանկյունից համալրել և հարստացնել փիլիսոփայության տեսական հայալեզու գիտական շտեմարանը,
- նպաստել մշակութային, սոցիալական և քաղաքական վերափոխումներին, ինչպես նաև մարդու սոցիալ-մշակութային դիմանկարի այլակերպումներին բնորոշ օրինաչափությունների բացահայտմանը թվայնացման և ինքնության ճգնաժամի համատեքստում,
- կիրառվել հանրային քաղաքականության և սոցիալական ռազմավարությունների մշակման գործընթացներում, ինչպես նաև սոցիալական ինքնության, մշակութային ինտեգրման և թվային միջավայրում մարդու ինքնության ձևավորման առանձնահատկությունները ուսումնասիրող աշխատություններում,
- կարող են օգտագործվել ԲՈՒՀ-երում դասավանդվող հետևյալ դասընթացներում՝ «Փիլիսոփայություն», «Սոցիալական փիլիսոփայություն», «Բարոյագիտություն», «Փիլիսոփայական մարդաբանություն», «Բեմականացված հասարակություն», «Ստեղծագործության տեսություն» դասընթացներում որպես ուսումնամեթոդական նյութ:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական գաղափարներն ու դրույթները ներկայացվել ու քննարկվել են ԵՊՀ Փիլիսփայության և հոգեբանության ֆակուլտետի Սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի տեսական սեմինարների ընթացքում (2023-2025 թթ.), Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի տեսական սեմինարների ընթացում (2024-2025թթ.), ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում 2025թ.նոյեմբերի 20-21-ը տեղի ունեցած

«Փիլիսոփայությունը և արդի մարտահրավերները: Մարդը գոյաբանական ծուղակում» խորագրով միջազգային գիտաժողովում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի գիտական հոդվածներում:

Ատենախոսության պլանը քննարկվել է ԵՊՀ Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնում 2023թ. դեկտեմբերին, ամբողջական շարադրանքը՝ 2025թ. դեկտեմբերին , իսկ արդեն 20.02.26-ին՝ վերջնական քննարկումից հետո, երաշխավորվել է հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից՝ 4-ական ենթագլուխներով, եզրակացությունից և գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 162 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, ներկայացվել է գիտական մշակվածության աստիճանը, առաջ են քաշվել հետազոտության նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանական սկզբունքները, առաջադրվել են գիտական նորույթ պարունակող դրույթները, հիմնավորվել է ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ **«Մարդու սոցիալական կեցությունը «երկակի իրականությունների» աշխարհում»,** նվիրված է արդի քաղաքակրթական ու սոցիալ-մշակութային զարգացումների համատեքստում մարդկային ավանդական կեցության արմատական փոխակերպումների և մարդակենտրոն աշխարհի մայրամուտի սոցիալ-փիլիսոփայական առանձնահատկությունների վերլուծությանը: Խնդիրը դիտարկելով էկզիստենցիալ ու սոցիալ-մշակութային ճգնաժամի դիտանկյունից, քննարկվել են սահմանի գոյաբանական կարգավիճակի, սահմանազանցման, վիրտուալ աշխարհի և հետկենսաբանական մարդու ձևավորման հիմնախնդիրները:

«Սահման և սահմանազանցում. սահմանազանցման գոյաբանական կարգավիճակը» առաջին ենթագլխում սահմանզանցումը դիտարկելով որպես արարող և ինքնակամ մարդու էութենական բնութագիր, որպես ինքնահաղթահարման և կեցության լիարժեքության հասնելու ներքին մղում, տարբերակվել են սահմանազանցման երեք հիմնական տիպեր (գոյաբանական, սոցիալական և մշակութային), որոնցից յուրաքանչյուրը բնութագրում է մարդու սահմանազանցական վարքի նպատակներն ու շարժառիթները: Մասնավորապես, եթե գոյաբանական սահմանազանցումը դիտարկվում է որպես մարդու վերջավոր և մահկանացու կեցության հաղթահարման և հավերժության ու լիարժեքության հասնելու ներքին մղում, ինչը մարդուն դարձնում է անդրանցական էակ, ապա

սոցիալական սահմանազանցման դեպքում մարդը փորձում է հաղթահարել սոցիալական կարգի հաստատված նորմերի, վարքի կանոնների և այլևայլ վերահսկողական մեխանիզմների պարտադրանքները, որպեսզի հասնի ազատության և ինքնիշխանության: Այս առումով սահմանզանցումը դիտարկվում է որպես իրականություն դարձած ազատություն, ինչը մարդուն դարձնում է գործունեության սուբյեկտ և մշակույթի զարգացման շարժիչ ուժ: Ինչ վերաբերում է մշակութային սահմանազանցմանը, ապա այս դեպքում գործունեության շարժառիթը գործող արժեքային համակարգերի, խորհրդանիշների և իմաստների վերակազմակերպումն է, ինչը հնարավորություն կտա հաղթահարելու ավանդական մշակույթի սահմանները և արդիականացնել կյանքի մշակույթն ու գործող գոյաբանական կարգը:

«Սահմանազանցումը որպես ապակառուցողական ընդվզում» երկրորդ ենթագլխում կյանքի մշակույթը դիտարկելով որպես կեցության սոցիալականացման, մարդակենտրոն աշխարհի ձևավորման և համակեցության կանոնակարգման գործունեական համակարգ՝ հիմնավորվում է այն թեզը, որ մարդու գոյության բոլոր ձևերն ու եղանակները մշտապես գտնվում են «եզրային դիրքում» և ունեն սահմանազանց լինելու ներունակություն: Ելնելով այս իրողությունից, կարելի է ասել, որ համակեցության մշակույթը ոչ միայն գոյաբանական կարգին որակական որոշակիություն հաղորդող և մարդու սոցիալական ինքնությունը կանխորոշող՝ սահմանապահի գործառույթներով օժտված համակարգ է, այլև սահմանազանցություն ենթադրող, իր իսկ հաստատած սահմանները հաղթահարող գոյաբանություն է: Դա նշանակում է, որ մշտապես կան սողանքներ ապակառուցողական վարք դրսևորող մարդու ձևավորման համար: Այս առումով ապակառուցողականությունը դիտարկվում է որպես սահմանազանցական գործունեության մի տարատեսակ, որի ներունակությունը կարող է պարպվել ինչպես ստեղծարար-վերափոխիչ, այնպես էլ սոցիալական իրականությունը մետաֆիզիկական բացասման ենթարկելու նպատակներով:

Հարկ է նկատել, որ, եթե սահմանազանցման դրական շարժառիթների պարագայում սոցիալական կյանքի հանդեպ «դիրքավորված» մարդու ապակառուցողական գործունեության նպատակը սոցիալական կյանքում դրսևորվող մարտահրավերները հաղթահարելն ու աշխարհն իր շահերին ու նվիրական ձգտումներին հարմարեցնելն է, ապա բացասական շարժառիթների պարագայում սահմանազանցումն ու ապակառուցողական գործունեությունը կարելի է բնութագրել որպես վարքի հանրայնորեն ընդունված կենսափիլիսոփայության դեմ մետաֆիզիկական բացասում ենթադրող ընդվզման դրսևորում:

Հաշվի առնելով հետարդիականությանը բնորոշ սոցիալ-մշակութային փոխակերպումների առանձնահատկությունները, ենթագլխում սահմանազանցումն ու ապակառուցողականությունը վերլուծվում է իբրև իրարամերժ հանգամանքներից ածանցյալ գործունեության ու վարքի դրսևորման եղանակ, որը մի դեպքում կարելի

է բնութագրել որպես սոցիալական ու հոգևոր հենարաններից զրկված մարդու ինքնանպատակ ընդվզում, մեկ այլ դեպքում՝ իբրև ավանդական մշակույթի արժեքները (հավատ, բարոյականություն, ընտանիք և այլն) մերժող արդի գոյաբանական կարգի դեմ ապստամբած մարդու ինքնապաշտպանական հուսահատ ճիգ:

«Կեղծանմանակումների աշխարհը. վիրտուալ համայանպատկերի մեջ տարրալուծված մարդը» երրորդ ենթագլխում քննարկվում են արդի գիտական ու տեխնոլոգիական նվաճումների արդյունքում սոցիալական կեցության թվայնացման և սկզբունքորեն այլ աշխարհի արարման աննախադեպ գործընթացները, որոնց հետևանքով երբեմնի ակնառու և մտերմիկ աշխարհից մարդն աստիճանաբար օտարվում է և «բնակություն» է հաստատում վիրտուալ մի տարածքում, որն ասես իր ապրած բնօրինակի կեղծանմանակը (սիմուլյակր) լինի: Առաջադրվում և հիմնավորվում է այն դրույթը, որ սոցիալական կեցության թվայնացման շնորհիվ ձևավորվում է երկու տարբեր կեցությունների (առարկայական ու վիրտուալ) միաժամանակյա գոյության մի աշխարհ, որտեղ մարդը ստիպված է հավասարապես գոյել երկու տարբեր իրողություններում կամ՝ կյանքի կազմակերպման ու կանոնակարգման երկու տարբեր մշակույթներում: Ընդ որում, եթե առարկայական աշխարհում մարդկային գոյության դրաման առավելապես ածանցյալ էր բնական ու սոցիալական հանգամանքներից, ապա վիրտուալ աշխարհում կյանքի դրաման ձևավորվում է արհեստական համակարգերին լիովին ենթարկված լինելու հանգամանքներից: Այն պատճառով, որ սոցիալականի թվայնացման հետևանքով նյութական ու հոգևոր կյանքի մի որոշ բաժինը տեղափոխվում է վիրտուալ աշխարհ, մարդն աստիճանաբար տարրալուծվում է վիրտուալ համայնապատկերի մեջ և կորցնում է իր կեցության ամբողջականությունն ու ինքնաընկալման համարժեքությունը և վերածվում է «թվային քոչվորի», ով ըստ անհրաժեշտության կարող է յուրացնել և խաղալ տարբեր ինքնություններ, ընտրել պահին համարժեք գոյության նախապատվելի կենսամիջավայր և համոզմունքների փոփոխման պարագայում հրաժարվել այդ ամենից:

Կարևոր է նկատել, որ վիրտուալ կեցությունը թեև նյութական չէ և չունի տարածաժամանակային հստակ կոորդինատներ, բայց այն իրական է այն առումով, որ ձևավորում է գոյության այլընտրանքային մի ոլորտ, որտեղ իրական առարկաներին փոխարինում են վիրտուալ կրկնօրինակները, մարդկանց՝ կերպարները, բառերին՝ նշանները և այլն: Թվայնացված ու վիրտուալ այդ աշխարհում, որտեղ սոցիալական կեցության տեխնիկական ձևերը գերազանցում են կեցության սոցիալական ձևերին, որտեղ կեղծանմանակումները գերազանցում են իրականությանը, մարդը աստիճանաբար կորցնում է մեծ զոհողությունների գնով ձեռք բերած սոցիալական սուբյեկտի կարգավիճակն ու ազատ մտածելու և որոշում կայացնելու հնարավորությունը: Այս առումով կարելի է ասել, որ վիրտուալ աշխարհի մարդը, ում հաճախ անվանում են «հետմարդ», ասես անմարմին միտք լինի, ում

մտքի աղբյուրը ոչ թե անմիջական զգայություններն են, այլ՝ թվային ալգորիթմները:

«Մարդու ապակենսաբանականացման էկզիստենցիալ հեռանկարը. «հետկենսաբանական մարդը»» չորրորդ ենթագլխում ժամանակակից մարդու էկզիստենցիալ ճակատագիրը քննարկվում է արդի գիտական և տեխնոլոգիական նվաճումների համատեքստում՝ ցույց տալով, որ այդ նվաճումները մի կողմից կատարելագործում են մարդու կենսագործունեության առարկայական հիմունքները, մյուս կողմից, սակայն, նպաստում են «հետկենսաբանական մարդու» ձևավորմանը, ինչի արդյունքում կարող է հիմնովին փոխվել դասական իմաստով բնական մարդու էությունն ու հոգևոր աշխարհը:

Խնդիրն այն է, որ տեխնոլոգիական կեցության ազդեցության շրջանակների ընդլայնմանը զուգահեռ մարդու կենսաբանական մարմինը կարող է և արդեն ենթարկվում է տեխնիկական այնպիսի միջամտությունների, որ կարող է ընդդիմանալ բնության դրվածքին և ձեռք բերել «կիբեռնետիկական անմահություն»: Այս իմաստով կարելի է ասել, որ ժամանակակից գիտական ու տեխնոլոգիական նվաճումների շնորհիվ ձևավորվում է մեր ժամանակների «գերմարդուն» ներկայացնող, կենսաբանական ու տեխնիկական օրգանների խառնուրդից կազմված մարդու մի նոր տարատեսակ (կիբորգ), ով ոչ միայն չի արտահայտում բնական մարդու եսությունը (самость), այլև վերածվում է մի կազմավորման, ում մարմնի մասերը կարելի է փոխարինել համարժեք գործառույթներով օժտված տեխնիկական սարքերով և այսկերպ հաղթահարել մարդու կենսաբանական «խափանումները»:

Այս համատեքստում կարևոր է նկատել, որ մարդու կենսաբանական ծածկագրի տեխնոմշակութային «վերանորոգումների» և, հետևաբար, «հետկենսաբանական մարդու» ձևավորման արդյունքում հիմնովին փոխվում է գոյութենական ապրումների (մահ, անմահություն, տառապանք և այլն) իմաստն ու էությունը, քանի որ մարդը վերածվում է ապակենսաբանականացված տեխնիկական կազմավորման (հետմարդ), ով կփորձի ոչ թե անդրանցական, այլ հենց երկրային կյանքում, ոչ թե «այնտեղ ու հետո», այլ «այստեղ ու հիմա» առանց բարոյական փորձությունների ենթարկվելու, հասնել ոչ թե հոգևոր, այլ մարմնական անմահության:

Երկրորդ՝ **«Մարդու սոցիալ-մշակութային դիմանկարի այլակերպումները»** գլուխը նվիրված է արդի քաղաքակրթական ու սոցիալական փոխակերպումների համատեքստում սոցիալական կյանքի բեմականացման, ինչպես նաև մարդու ինքնության ու սոցիալ-մշակութային տեսակի դիմանկարի նոր դրսևորումների («դիմակով մարդ», «գեղապաշտ մարդ», «զորանոցի մարդ», «ավելորդ մարդ») վերլուծությանը:

«Սոցիալականը որպես բեմականացված կեցություն. «դիմակով մարդը»» առաջին ենթագլխում սոցիալականը դիտարկվում է իբրև համակեցություն կազմակերպող ու կանոնակարգող բեմականացված կեցություն, որի շրջանակներում մարդկային փոխհարաբերությունները դրսևորվում են

սոցիալական դերերի և համապատասխան դիմակների միջոցով: Իբրև մարդու սոցիալական կարգավիճակից ածանցյալ սոցիոմշակութային կերպար, սոցիալական դերը ոչ միայն կանխորոշում է տվյալ գոյաբանական կարգում մարդու սոցիալական դերն ու դիրքը, այլև սոցիալական «նյութափոխանակության» համակարգում նրա ներառվածության աստիճանն ու ինքնադրսևորման հնարավորությունները:

Ի տարբերություն պարփակ ու ավանդապաշտ հասարակությունների, որոնցում հանրային կյանքը սահմանազատված էր անձնական կյանքից և մարդու սոցիալական դերը խստիվ պայմանվորված էր նրա սոցիալական պատկանելիությունից, հետարդիականության անհատապաշտական ու ազատական հասարակություններում մարդու սոցիալական կարգավիճակը ախտորոշելիս հանրային կարծիքը հաճախ ղեկավարվում է այնպիսի սուբյեկտիվ գործոններով, ինչպիսիք են արտաքին հմայքը, հագուստը. այլ կերպ ասած՝ սոցիալական իսկության փոխարեն շրջանառվող մեդիապատկերն ու հանդիսադրված «ես»-ը:

Ելնելով այս իրողությունից և հաշվի առնելով արդի սպառողական-զանգվածային հասարակություններում կյանքի թատերայնացման անհերքելի միտումները, սույն ենթագլխում սոցիալական դերը դիտարկվում է մարդու դերասանական «ես»-ը մարմնավորող դիմակի տեսանկյունից, ցույց տալով, որ արդի սոցիալ-մշակութային իրողություններում դիմակավորման, «ուրիշին» խաղալու հնարավորությունների բազմացման շնորհիվ ձևավորվել և ձևավորվում է մարդու սոցիալական մի տարատեսակ, ով նման է չբացահայտված գործակալի և կարող է իր իսկությունն ու ինքնությունը քողարկել դիմակի տակ և ապրել տարբեր սոցիալական ճակատագրեր, դիրք ու կարգավիճակ ունեցող մարդկանց կյանքով:

Վերլուծելով դիմակի սոցիալ-մշակութային գործառույթների առանձնահատկությունները՝ քննարկվել է նաև դիմակավորման շարժառիթների հիմնախնդիրը, ցույց տալով, որ մի դեպքում այն ինքնաարտահայտման միջոց է ծառայում (Ես նա եմ, ում ներկայացնում եմ), մեկ այլ դեպքում՝ ծառայում է տիրող կարգի դեմ մարդու անհամաձայնությունը քողարկելու միջոց (Ես նա եմ ում ուզում էիք, որ ներկայացնեմ): Այլ կերպ ասած՝ թատերայնացված գոյաբանական համակարգում դիմակը մի կողմից ինքնապաշտպանության, մյուս կողմից՝ ինքնադրսևորման միջոց է:

«Սոցիալական կեցության գեղագիտացումը. լինել թե երևալ» երկրորդ ենթագլխում կեցության գեղագիտացման երևույթը դիտարկվում է որպես գոյաբանական հիմնախնդիր, ցույց տալով, որ սոցիալական կյանքը մի կողմից ենթարկվում է գործնական հարաբերությունների կազմակերպման և նյութական բարիքների արտադրմանը, մյուս կողմից, սակայն, կյանքը նաև մշակութային ու արժեքային փորձառություն է, քանի որ մարդը ֆիզիկական գոյատևման խնդիրները լուծելիս փորձում է իրականությունը վերափոխել ու դարձնել գեղագիտական ընկալումների այնպիսի հարթակ, որտեղ ամեն մի գործողություն, արարք և առարկա լրացուցիչ արժևորում կստանան և կընդգծեն կյանքի զգայական խորությունը: Այս

առնչությամբ կեցության գեղագիտացման սոցիալ-մշակութային պատճառներն ու շարժառիթները վերլուծելիս ցույց է տրվում, որ «հերոսական» համատեքստեր ու գրավիչ պատումներ ձևավորելու միջոցով կեցության գեղագիտացումը մի կողմից կատարում է առօրյա փորձառությունների վերաիմաստավորման, կյանքին հուզական լիարժեքություն հաղորդելու գործառույթ, մյուս կողմից՝ արտաքին շքեղության ու գեղագիտական ձևավորման միջոցով կատարում է սոցիալական գոյի ներքին հակասություններն ու կյանքի դժվարությունները քողարկելու գործառույթ:

Հիմնախնդիրը քննարկելով հետարդյունաբերական-սպառողական հասարակությունների սոցիալ-մշակութային համատեքստում, ցույց է տրվում, կեցության գեղագիտացման երևույթը ներթափանցում է մարդու գոյաբանական խորքերը, ախտահարում նրա սոցիալ-մշակութային էությունը և ձևավորում սպառողական մշակույթին բնորոշ սպառող հաճախորդների չտարորոշված մի զանգված, որին անդամագրված «զանգվածի մարդու» կյանքը վերածվում է ցուցադրված լինելու մի հարթակի, որտեղ այն, ինչ պետք է ներսից ապրվի, վերածվում է տեսանելի ու հանդիսադրվող կյանքի կեղծանմանակված ձևի, այսինքն մի հարթակի, որտեղ կյանքը ոչ թե ապրվում, այլ՝ բեմականացվում է:

Անդրադառնալով նաև ժամանակակից թվային ու վիրտուալ միջավայրում կյանքի գեղագիտացման և «գեղապաշտ մարդու» վիրտուալ տարատեսակի սոցիալ-մշակութային դիմանկարին, ցույց է տրվում, որ ապագոյաբանականացված այդ աշխարհում, որտեղ արտադրվում և սպառվում են ոչ թե ֆիզիկական իրականությանը բնորոշ առարկաներ, այլ նշաններ ու տեքստեր, կյանքը լիովին ենթարկվում է իմաստային լիցքեր չունեցող տեսարժան պատկերների ցուցադրման տրամաբանությանը (ցուցադրական ապրելակերպ, կենցաղ, նորաձևություն և այլն) և գոյաբանական ներթափանցումների փոխարեն կյանքը մսխվում է առերևույթ դիտարժանության, բայց խորքում տպավորությունների մակերեսային աշխարհ հորինելու վրա:

«**Անդեմությունը որպես հետարդիականության սոցիալ-մշակութային բնութագիր. «զորանոցի մարդը»»** երրորդ ենթագլխում արդի սոցիալ-մշակութային փոխակերպումները քննարկվում են երկու իրարամերժ գործընթացների համատեքստում. մի կողմից դրանք նպաստում են պարփակված հասարակությունների ամենակարող՝ ավանդույթի ուժով գործող մշակութային հաստատությունների վերահսկողությունից մարդու ազատագրմանը, մյուս կողմից, սակայն, ձևավորվում է խճանկարային, մշակութային հստակ կոորդինատներ չունեցող գոյաբանություն, որտեղ մարդը կարող է լինել «անցյալ չունեցող» էթնիկ ու խմբային նույնականությունների հետ կապերը խզած անդեմ խառնամբոխի նույնքան անդեմ մի կազմավորում, ով ոչ թե քաղաքացի է այլևս, այլ տնտեսական, քաղաքական ու սոցիալ-մշակութային շուկաների հաճախորդ:

Ելնելով այս իրողությունից, ենթագլխում անդեմությունը դիտարկվում է որպես տեխնիկական քաղաքակրթությանը ու սպառողական հասարակությանը բնորոշ,

առերևույթ ազատ ու բնական, բայց ներքնապես անդեմ մարդու տեսակին բնորոշ «սոցիալ-մշակութային հիվանդություն»:

Բանն այն է, որ տեղեկատվական քաղաքակրթությունը ձևավորել է ցանցերից ու հոսքերից հյուսված, կառուցվածքային որոշակիությունից զրկված, նմանվելու և նմանակելու օրենքներով գործող, գովազդի, նորաձևության, շուկայի և համօրինակ վարքագիծ թելադրող այլևայլ կառույցների հրահանգներին ընկերացած ու համակերպված մարդուն, ով ոչ միայն առարկայական, այլև հոգևոր կյանքում նմանվում է «զորանոցի մարդու»: Նա մյուսներին նման է և, հետևաբար, անդեմ է ոչ միայն արտաքին հատկանիշներով, այլև համոզմունքներով, մտածողությամբ, ակնկալիքներով ու պահանջմունքներով:

Կարևոր է նկատել նաև, որն անդեմության և միաչափության ոգին գերիշխող է ոչ միայն առարկայական աշխարհում, այլև՝ վիրտուալ աշխարհում, որտեղ մարդը գործ ունի ոչ թե իրական առարկաների ու մարդկանց հետ, այլ՝ դրանց կեղծանմանակումների: Գտնվելով պատճենահանվող մուտքերի ու ելքերի մշտական հսկողության տակ, կամավոր ու պատրաստակամ վերածվելով էլեկտրոնային հասցեի ու հեռախոսահամարի, վիրտուալ աշխարհի մարդը ակամայից ենթարկվում է սթափության ձայնը խլացնող «վիրտուալ ընկերակցության» խաղի կանոններին և հայտնվում հերթական մի զորանոցում, որտեղ նա ընդամենը տեղեկատվական ապրանքների սպառման շղթայի կրավորական, անհատականությունից զրկված սուբյեկտ է:

«Մարդը սոցիալ-մշակութային կեցության լուսանցքում. «ավելորդ մարդը»» չորրորդ ենթագլխում քննարկվում է արդի տեխնոլոգիական քաղաքակրթությանը բնորոշ «լուսանցքային կեցության» ձևավորման և մարդու քաղաքացիական կարգավիճակի հիմնահարցը:

Տեխնոլոգիական քաղաքակրթությունը դիտարկելով որպես մարդու վերափոխիչ գործունեության հնարավորությունների ընդլայնման, արտադրողականության բարձրացման և աշխատանքային պայմանների բարելավման համակարգ, միաժամանակ ցույց է տրվում, որ այն իր մեջ պարունակում է նաև մարդու սոցիալական ակտիվության սանձման, անհատականությունից ու սուբյեկտությունից զրկման, այլ կերպ ասած՝ կյանքի լուսանցքում հայտնվելու վտանգներ: Խնդիրն այն է, որ, եթե պարփակ հասարակություններին բնորոշ «դասական սոցիալականում» մարդը հանրային կյանքին ինտեգրված, մշտապես հանրային կարծիքի տեսադաշտում գտնվող սուբյեկտ էր, ապա մշակույթի ազատականացման, հանրայինի ու մասնավորի խստիվ տարանջատման արդի գոյաբանության մեջ կյանքը ընթանում է որպես չհամակարգված ու պատահական իրադարձությունների մի հոսք, որտեղ սոցիալական ամբողջի ու մարդու միջև երկխոսությունը ևս համակարգված ու պահանջարկված չէ:

Ենթագլխում «ավելորդ մարդու» դիմանկարը քննարկվում է մարդու ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր աղքատության տեսանկյուններից, ցույց տալով, որ,

եթե առաջին դեմքում մարդն «ավելորդ» է դառնում միայն այն պատճառով, որ զրկվում է աշխատանքի նյութական ապահովվածության, այլ կերպ ասած՝ կյանքի նյութական պայմանների վերարտադրման հնարավորություններից, ապա հոգևոր աղքատության պարագայում մարդու «հոգևոր անօթևանության» և ավելորդության պատճառն այն է, որ զանգվածային մշակույթի ու սպառողական ապրելակերպի կենսափիլիսոփայությունը նրան զրկում է սեփական կեցությունը ըմբռնելու և իմաստավորելու ընդունակությունից:

Հաշվի առնելով այն ակնհայտ ճշմարտությունը, որ մարդու գոյությունը երաշխավորված է այնքանով, որքանով նա պահանջարկված է, ենթագլխում «ավելորդ մարդու» սոցիալ-մշակութային դիմանկարը բնութագրվում է որպես «լուսանցքային կեցության» համատեքստում մարդու գոյության մի եղանակ, երբ ժամանակի հոգուն համահունչ չապրող մարդու տեսակը հարկադրաբար կամ ինքնակամ կյանքի սուբյեկտից վերածվում է իրենից անկախ ընթացող իրադարձությունների կրավորական ու լքվածության մատնված «կողմնակի դիտորդի», քանի որ զրկված է սոցիալ-մշակութային իրականության հետ անմիջական կապերից և գոյում է՝ չլինելով անհրաժեշտ:

Եզրակացությունում ամփոփվել են հետազոտության արդյունքները և արվել են տեսական ու գործնական հնչեղություն ունեցող մի շարք եզրակացություններ: Մասնավորապես՝

- Սահմանի գոյաբանական կարգավիճակը դիտարկելով համակարգաստեղծ ու համակարգապահպան գործառույթների համատեքստում, կարևորելով նաև այն հանգամանքը, որ բնական ու սոցիալական աշխարհներում իր գերակայությունն ու գերազանցությունը հաստատելու, իր իսկ կերտած աշխարհում էկզիստենցիալ անկախության հասնելու համար մարդու ծավալած գործունեությունը սահմանազանցական է, եզրակացվել է, որ միայն այդ կերպ նա կարող է հաղթահարել գոյաբանական կարգի սահմանափակություններն ու դառնալ սոցիալական կյանքի ակտիվ ու ստեղծարար սուբյեկտ:
- Վերլուծելով մարդու՝ գոյության եղանակներն ու ձևերը կատարելագործելու սոցիալ-մշակութային դրդապատճառներն ու շարժառիթները, եզրակացվում է, որ սահմանազանցական գործունեությունը կարող է նաև ապակառուցողական դրսևորումներ ունենալ, ինչը կարելի է բնութագրել որպես տվյալ սոցիալական գոյաբանության և նրանում սոցիալական վարքի հանրորեն ընդունված կենսափիլիսոփայության դեմ մետաֆիզիկական բացասում ենթադրող ընդվզման տարատեսակ:
- Սոցիալականի թվայնացման և վիրտուալացման արդյունքում ձևավորվում է ցանցային քաղաքակրթությանը բնորոշ սոցիոմշակութային վիրտուալ մի իրականություն, որի մեջ հայտնված մարդը վերածվում է «թվային քոչվորի» և ըստ հանգամանքների կարող է փոխել իր ինքնության սոցիալական դիմանկարը՝ կորցնելով մեծ զոհողությունների գնով ձեռք բերած անհատականությունն ու

սոցիալական սուբյեկտի կարգավիճակը: Այլ կերպ ասած՝ ձևավորվում է մարդու մի տարատեսակ, ում մտածողությունը սնվում է ոչ թե անմիջական զգայություններից, այլ՝ թվային ալգորիթմներից:

- Վերլուծելով մարդու էկզիստենցիալ ճակատագրի վրա ժամանակակից գիտության և տեխնոլոգիական նվաճումների առկա և հնարավոր հետևանքները՝ ուրվագծվում է մարդու կենսաբանական ծածկագրի տեխնոմշակութային «վերանորոգումների» արդյունքում ձևավորվող և արդեն իսկ գոյության իրավունք ձեռք բերած «հետկենսաբանական մարդու» ընդհանրական դիմանկարը, նշելով, որ ծնունդով տրված սեռի փոփոխման (տրանսգենդեր), մարմնի բնական օրգանները համարժեք գործառույթներ կատարող տեխնիկական սարքավորումներով փոխարինելու հնարավորություններ ստացած և գոյութենական ապրումներից (մահ, ցավ, տառապանք և այլն) ձերբազատված մարդու «կենսատեխնոլոգիական խառնուրդը» առանց բարոյական փորձությունների ենթարկվելու կարող է հասնել նաև «կիբեռնետիկական անմահության», ինչը հակասում է բնության դրվածքին ու մարդու էկզիստենցիալ հոգեկերտվածքին:
- Սոցիալականը դիտարկելով որպես համակեցությունը կազմակերպող ու կանոնակարգող բեմականացված կեցություն, ցույց է տրվում, որ արդի սպառողական-զանգվածային հասարակություններում գերիշխում են կյանքի թատերայնացման միտումները, և սոցիալական բեմահարթակում մարդու խաղացած դերը հաճախ ընկալվում է նրա դերասանական «ես»-ը մարմնավորող դիմակի տեսանկյունից: Դիմակավորման կամ դեմքի ու դիմակի սերտաճման արդյունքում մարդը սեփական ինքնությունն ու իսկությունը քողարկելու, «ուրիշին» խաղալու հնարավորություններ է ստանում և նմանվում է հանրային կյանքում իր իրական դեմքը ծածկագրած ու չբացահայտված մի գործակալի, ով ըստ հանգամանքների կարող է միաժամանակ ապրել տարբեր ճակատագրեր ունեցող մարդկանց կյանքով:
- Վերլուծելով կյանքի գեղագիտացման շարժառիթներն ու գործառույթները, հիմնավորվում է այն դրույթը, որ գրավիչ պատումներ ու տեսարժան իրականություն ձևավորելու միջոցով գեղագիտացումը մի դեպքում կատարում է առօրյա փորձառությունների վերաիմաստավորման, մյուս դեպքում՝ արտաքին շքեղության միջոցով սոցիալական գոյը ապրելու համար հրապուրիչ միջավայր դարձնելու գործառույթ:
- Ժամանակակից զանգվածային մշակույթը ու սպառողական հոգեբանությունը, դրանց տարածումն ու գովազդումը ձևավորում են միակերպ ու միաչափ, մարդկային հոգու կրքերը սանձող, անհատականությունը անդեմության մեջ պարփակող, այլ կերպ ասած՝ զորանոցային գոյաբանության բնորոշ մի կենսաձև, ինչի արդյունքում դիմազրկված և հոգևոր ինքնությունը կորցրած մարդու կյանքն ասես ընթանում է շեշտադրումներից զուրկ, վերադասի հրամաններին սպասող «զորանոցի մարդու»

կենսակերպին բնորոշ միօրինակության մեջ՝ նրան դարձնելով անդեմ ու որակական որոշակիությունից զրկված «ոմն մեկը»:

- Ավելորդ մարդու հիմնախնդիրը դիտարկելով մարդակենտրոն գոյաբանության ճգնաժամի համատեքստում՝ եզրակացվում է, որ անկախատեսելի այլակերպումների ենթարկվող ժամանակակից աշխարհում կյանքի ազատական ու անհատապաշտական մշակույթը նպաստում է հանրային կյանքից օտարված, լքված ու անգործության մատնված «ավելորդ մարդկանց» սոցիալական մի ենթաշերտի ձևավորմանը, որը զրկված է սոցիալական ամբողջի հետ երկխոսելու և «սոցիալական հայելու» մեջ իր արտացոլանքը տեսնելու հնարավորությունից: Այս առումով կյանքի լուսանցքում հայտնված և գոյության հարկադրված մի կենսաձևի մեջ հայտնված «ավելորդ մարդուն» կարելի է բնութագրել որպես սոցիալական սուբյեկտի կարգավիճակից զրկված՝ կյանքի կողմնակի ու կրավորական դիտորդ, ով գոյում է չլինելով պահանջարկված:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Նահապետյան Օ., «Գեղապաշտության հաղթարշավը ժամանակակից աշխարհում» / //«ՎԷՄ», ԺԷ (ԻԳ) տարի, 3 (91), Եր., 2025, էջ 162-180:
2. Նահապետյան Օ., «Մարդակենտրոն գոյաբանության մայրամուտը. հետկենսաբանական մարդը» // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», No. 1 (46), Եր., 2025, էջ 5-16:
3. Նահապետյան Օ., «Սահմանազանցումը իբրև կեցության լիարժեքության ձգտում. ինքնահաղթահարող մարդը» //«ՎԷՄ», ԺԶ (ԻԲ)տարի, 2 (86), Եր., 2024, էջ 9-23:
4. Նահապետյան Օ., «Սոցիալական կեցության ապագոյաբանականացումը. վիրտուալ աշխարհի մարդը» //«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», No. 3 (45), Եր., 2024, էջ 33-47:
5. Նահապետյան Օ., «Բեմականացված հասարակություն. դիմակով մարդը» //«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», No. 1 (40), Եր., 2023, էջ 17-28:
6. Նահապետյան Օ., «Ապակառուցողական վարքի սոցիոմշակութային հիմունքները» //«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», No. 3 (42), Եր., 2023, էջ 40-49:

7. Նահապետյան Օ., ««Ավելորդ մարդու» սոցիալ-մշակութային դիմանկարը» //«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», No. 2 (38), Եր., 2022, էջ 40-50:

8. Նահապետյան Օ., «Անդեմության սոցիալ-մշակութային դիմանկար. «զորանոցի մարդը»» //«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», No. 3 (39), Եր., 2022, էջ 16-25:

9. Նահապետյան Օ., «Հասարակական կարծիքի գործառնական առանձնահատկությունները հետարդիականության համատեքստում» //«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», No. 3, Եր., 2021, էջ 52-62:

Нагапетян Овсанна Левоновна

СОЦИОКУЛЬТУРНОЕ БЫТИЕ ЧЕЛОВЕКА В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ ОНТОЛОГИЧЕСКИХ ВЫЗОВОВ

Диссертация на соискание ученой степени кандидата философских наук по специальности 09.00.01 –«Философия»

Защита состоится 13 мая, 2026г. в 14.00 на заседании Специализированного совета Философии и социологии 013 ВАК в Ереванском государственном университет по адресу: 0025, г.Ереван, ул. Абовяна 52а, ЕГУ

Резюме

В современном мире в результате научно-технологического прогресса, направленного на обогащение и совершенствование жизненного мира человека, а также под воздействием различных экономических, политических и социокультурных процессов, коренным образом изменяется и продолжает изменяться прежняя структура социальной среды, организующая общественную жизнь. Повседневность и жизнедеятельность человека подвергаются техногенным, культурным, антропологическим и экзистенциальным изменениям. В данном контексте особую значимость приобретают онтологические вызовы современности, связанные с изменением способов человеческого присутствия в мире, переосмыслением границ между природными измерениями человеческого бытия.

В контексте современной потребительской культуры человеческое существование нередко оценивается и осмысляется с точки зрения факторов и критериев, способствующих экономическому процветанию, что, в свою очередь, требует нового понимания и переосмысления того, что означает быть человеком и каким образом возможно сохранить его онтологическую целостность в мире, где ценности формируются согласно логике технологических инноваций и экономических запросов. Таким образом формируется один из ключевых онтологических вызовов современности — сохранение человеческой идентичности и ценностного ядра личности в условиях ускоряющихся социокультурных и технологических трансформаций .

Дело в том, что традиционные формы организации социальной жизни постепенно утрачивают свою прежнюю жизнеспособность, и формируются новые механизмы организации и регулирования социальной жизни, которые все в меньшей степени соотносятся с предшествующим историческим опытом и вытекают из требований и внутренней логики изменившейся историко-культурной среды. В результате доминирования либеральной и индивидуалистической культуры, ослабления общинных связей, а также деонтологизации отношений в цифровой среде формируется новый контекст понимания, в рамках которого «социальная смерть» становится катастрофой для всех тех, кто в своей фрагментированной и нестабильной повседневной жизни превратился в отчужденных, маргинальных, обезличенных и избыточных акторов. Эти явления являются не только симптомами культурного и психологического кризиса, но и свидетельствуют о том, что в некогда устойчивом и предсказуемом социальном жизненном мире происходят глубинные изменения, в результате которых традиционные основания культуры жизни разрушаются и утрачивают свои прежние функции регуляции жизнедеятельности.

Следует отметить, что актуальность данной темы обусловлена также необходимостью осмысления результатов и последствий антропологических, цивилизационных и социокультурных трансформаций, происходящих в современном мире, с точки зрения тенденций развития. Более того, беспрецедентный технологический прогресс последних лет, а также расширение деструктивной и трансгрессивной деятельности человека свидетельствуют о том, что современная цивилизация сталкивается с проблемой морально-психологического регресса человека. В связи с этим возникает необходимость понять, каким образом возможна ситуация, при которой человек как активно действующее и творческое существо обнуляет возможности собственного существования. Безусловно, для обретения экзистенциальной автономии в созданном им мире человек должен и вынужден быть трансгрессивным, нередко и деструктивным, однако из такого способа созидания вытекает и то, что драма человеческого самоутверждения во всей своей глубине остается крайне актуальной и нуждается в социально-философском осмыслении.

Nahapetyan Ovsanna Levon

HUMAN SOCIO-CULTURAL EXISTENCE IN THE CONTEXT OF MODERN ONTOLOGICAL CHALLENGES

Dissertation for the Receiving Academic Degree of Candidate Of Philosophical Sciences under the specialty 09.00.01 – «Philosophy»

The defense will take place on 13 may 2026 at 14.00
at Yerevan State University, at the committee meeting of Philosophy and Sociology with the speciality of HCC 013
Address: 52a Abovyan Street, 0025, Yerevan, YSU.

Abstract

In the modern world, as a result of scientific and technological progress aimed at enriching and improving the human experience, as well as under the influence of various economic, political, and sociocultural processes, the existing structure of the social environment that organizes public life is fundamentally changing and continues to change. Everyday life and human activity are subject to technological, cultural, anthropological, and existential changes. In this context, the ontological challenges of our time, associated with changing modes of human presence in the world and the rethinking of the boundaries between the natural dimensions of human existence, acquire particular significance.

Within the context of contemporary consumer culture, human existence is often evaluated and interpreted in terms of factors and criteria that contribute to economic prosperity. This, in turn, necessitates a renewed understanding and reinterpretation of what it means to be human and how it is possible to preserve ontological integrity in a world where values are formed according to the logic of technological innovation and economic demands. Thus, one of the key ontological challenges of modern times is being formed: the preservation of human identity and the value core of the individual in the context of accelerating socio-cultural and technological transformations.

The fact is that traditional forms of organizing social life are gradually losing their former viability, and new mechanisms for organizing and regulating social life are emerging that are increasingly less aligned with previous historical experience and stem from the demands and internal logic of a changing historical and cultural environment. As a result, the dominance of liberal and individualistic culture, the weakening of communal ties, and the de-ontologization of relationships in the digital environment are creating a new context of understanding, within which "social death" becomes a catastrophe for all those who, in their fragmented and unstable everyday lives, have

become alienated, marginal, impersonal, and redundant actors. These phenomena are not only symptoms of a cultural and psychological crisis but also indicate that profound changes are occurring in a once stable and predictable social lifeworld, as a result of which the traditional foundations of cultural life are being destroyed and are losing their former functions in regulating life.

It should also be noted that the relevance of this topic is determined by the necessity of comprehending the results and consequences of the anthropological, civilizational, and sociocultural transformations occurring in the contemporary world from the perspective of developmental trends. Moreover, the unprecedented technological progress of recent years, along with the expansion of destructive and transgressive human activity, indicates that modern civilization is facing the problem of the moral and psychological regression of the human being. In this regard, it becomes necessary to understand how a situation is possible in which the human being, as an actively acting and creative entity, nullifies the possibilities of his or her own existence. Undoubtedly, in order to attain existential autonomy within the world he or she has created, the human being must—and is compelled to—be transgressive and often destructive; however, this very mode of creation also implies that the drama of human self-affirmation, in all its depth, remains acutely relevant and requires socio-philosophical reflection.